

Չաւեն նոյն ժամանակներուն Կարինէ մինչեւ Տրապզոն ծանր ճանապարհորդութեամբ ամեն քաղաք կենալով եւ հետազօտելով, իւր Արփենին կը փնտրէր եւ այնպէս կը հասներ Կոստանդնուպոլիս. մշակութիւն, ծառայութիւն, շէնքերու մէջ բանուորութիւն, ամեն բան ընելով կ'ապրէր, խելքը, միտքը իւր կորուստին վրայ միշտ լինելով. խեղճ մարդը շատ անգամ բռն ուսին՝ փոքրիկ տղայ մը տեսնելուն պէս կը վազէր կը սլանար, որ տեսնէ որոշ թէ միգուցէ Արփենին լինի: Իշխանաւոր, զինուորական կամ քաղաքական կը դիտէր, որ տեսնէ միգուցէ Թումայ լինի. վասնզի Կարին առած տեղեկութիւնքը զինք համոզած էին թէ Թումայ էր իւր աւագակը, բայց անօգուտ. հայկական յարատեւութեամբ միտքը դրած թէ օր մը չէ օր մը անշուշտ իւր կորուսեալ որդին կը գտնէ՝ թաղ-թաղ իւր աշխատութեան տեղերը կը փոխէր այդ ծովացեալ մայրաքաղաքին մէջ:

Այսպէս, Կ'աղզուանի գիւղացի զինուորը Բիւզանդիոյ փողոցները կը պտըտէր, մշակի հագուստներու տակ ծածկած ազնիւ սիրտ մը եւ անիրաւ գողութեան մը դէմ իւր մտքին մէջ պատերազմ հրատարակէր էր մեծ իշխանի մը հակառակ, եւ որ թուի թէ իրմէ կը փախչէր, վասնզի տեղ մը զինք չէր գտներ: Չորս երկայն տարիներ անցան: Ոչ գթումայ եւ ոչ զարփենի տեսաւ. տխրութիւնը զինք պատեց, լքաւ, զօրութիւնը տկարացաւ, եւ ինքնիրեն, «Ո՛հ, աստուած իմ, — կ'ըսէր, — միթէ՞ կարելի է, որ քու Աւետարանդ զիս խաբէ, քու սեղանիդ առջեւէն ինձ ձայն եկաւ թէ՛ «Այս իմ որդին, որ կորուսեալ էր՝ գտնուեցաւ, եւ սուրբ մայր մը իր գերեզմանին մէջէն կրկնեց քու խօսքը. «խնդրեցէք եւ տրուի ձեզ» եւ այս չորս տարին կը կատարուի, որ պանդուխտ թափառական կը պտըտիմ, որք մը՝ հրեշտակ մը կը փնտրեմ եւ չեմ գտներ. ո՛հ աստուած իմ, յիշէ քու արդարութիւնդ եւ ողորմէ՛ ինձ, ողորմէ՛ որբացեալ հրեշտակին»: Այսպէս կ'աղօթէր առաւօտ մը խեղճ Չաւեն, եւ այդ երկաթեայ մարդը իր ողորմելի բնակարանին մէջ՝ իր խշտիին վրայ ինկած արցունք կը թափէր: Յետոյ աչքերը սրբելով ելաւ փողոց, տեսաւ ժողովուրդն աղմկեալ, ամեն կերպարանաց վրայ երկիւղ եւ յոյս կը տիրէին, ամենքն իրարու լուր կ'ուտային թէ կայսրը մեռած է եւ կը դիմէին Սուրբ Սոփիա եկեղեցուոյ եւ արքունեաց կողմը: Հերակլէս մօտէն տեսած եւ իւր յաղթական դրօշակին տակ պատերազմած մարդ էր Չաւեն, իր մտքին մէջ դիւցազին յիշատակը միայն կենդանի էր, նորա վերջին տարիներուն մեղկութիւնը, որ վատութեան գրեթէ կը հաւասարէր, չէր կրնար զղալ եւ հաւատալ. զարմանալով կը նայէր ժողովրդեան՝ նորա մահուան համար տեսնուած անտարբերութեան վրայ, որ իւր յաջորդին համար աւելի եռանդուն էր: Ոմանք մեծ որդուոյն Կոստանդինի կողմնակիցք էին, ոմանք նորա հակառակ կյսրուհուոյն եւ փոքր որդուոյն Երակլոսի կողմը կը բռնուէին: Ուստի ինք, որ որոշած էր ճանապարհորդել դառնալ հայրենիք՝ թողած իւր շալակը իւր